ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 7

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել ավագանու 2015 թվականի փետրվարի 12-ի N 2 արտահերթ նիստի օրակարգը՝

1.«Կոտայքի մարզի Զորավան համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող երեխաների ծնողական ամսական վճար և արտոնություններ սահմանելու մասին:

2. Զորավան համայնքի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը հաստատելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Զորավան համայնքի սեփականություն համարվող հողամասը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱՐՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 8

## «ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 -րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի և 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Համայնքի մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական ամսական վճար սահմանել 6000 /վեց հազար/ դրամ

2.Ծնողական ամսական վճարների գծով արտոնություններ սահմանել համայնքի մանկապարտեզ հաճախող երեխաների հետևյալ խմբերին.

ա/ միակողմանի ծնողազուրկ երեխաների համար 50%-ի չափով

բ/ երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար 100%-ի չափով

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2012 թվականի ապրիլի 6-ի «Զորավանի մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական ամսական վճարների և արտոնությունների սահմանման մասին» N 13 որոշումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼՔԱՐՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԵԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 9-Ն

## ԶՈՐՈՎՈՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և 53-րդ հոդվածով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Զորավան համայնքի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱՐՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 10-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Զորավան համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն աղյուսակի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱՐՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Աղյուսակ 1

## Գյուղատնտեսական նշանակության հողի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական նշանակության հող | գ. Զորավան | 07-031-0241-0002 | 6.5212 | գյուղատնտեսական | II կարգ անջրդի | Վարելահող | 3965000 | չկան |
| | | | | | | | | | |

Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար